



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻՆ ՁԵՌԱՄԲ ՔԱՅԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ՝ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

- ԲՐԵՆ. ՆԱՉԱՐԷԹ ՍՐԿ. ՔԻՐԱՉԵԱՆ ԿՈՉՈՒԵՑԱԲ Տ. ԴԵՌՆԴ ՔԱՅԱՆԱՅ



Միացեալ  
Նահանգներու Արեւմտեան  
մեր Թեմի տարեգրութեանց  
մէջ, այս տարուան  
Քրիստոսի  
Այլակերպութեան տօնը՝  
Կիրակի, 31 Յուլիսը, պիտի  
արձանագրուի իբրեւ  
յիշատակելի ու  
հանգրուանային օր,  
որովհետեւ այդ օրը մեր  
հոգեւորականաց դասը  
Նուիրեալ Նոր անդամով մը  
հարստացաւ: Արդարեւ,

Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ  
Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, եպիսկոպոսական հանդիսաւոր Ս.  
Պատարագի ընթացքին, քահանայ ձեռնադրեց եւ օծեց Քրեստէնթա Յովիտի  
Հայց. Առաքելական եկեղեցւոյ դպրապետ բարեշնորհ Նազարէթ Սրկ.  
Քիրազեանը, զայն վերանուանելով Տ. Դերոնդ Քահանայ:

Նորընծայ քահանային խարտաւիլակներն էին Գերպ. Տ. Միւռն Ծ.  
Կրդ. Ազնիկեան եւ Արժ. Տ. Արտակ Քհնյ. Տեմիրճեան, որոնք Ս. Պատարագի  
պահուն սպասարկեցին Ս. Սեղանին: Արարողութեան իրենց  
մասնակցութիւնը բերին նաեւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ միւս քահանայ  
հայրերը՝ Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Աթմաճեան եւ Տ. Կոմիտաս Քհնյ.  
Թորոսեան: Կնքահայրութիւնը յանձն առած էր Տոքթ. եւ Տիկին Յովհաննէս  
եւ Մարինա Տեր Զաքարեան ամուլը:

Արարողութեան ներկայ էին Ազգ. Վարչութեան անդամներէն Տիկին  
Ռիմա Պօղոսեան, Տեառք Վահան Պզտիկեան, Կարօ Էշկիեան եւ Կարէն  
Բենիասեանս, Ս. Աստուածածին եւ Քրեստէնթա Յովիտի եկեղեցիներուն

հոգաբարձութանց ու Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամներ, ինչպես նաև հաւատացեալներու հոծ բազմութիւն մը:



Քահանայական ձեռնադրութեան ու օծման արարողութիւնը տեղի ունեցան Ս. Պատարագի ընթացքին, օրուան ճաշու գիրքի ընթերցումէն առաջ: Ս. Պատարագի արարողութեան աւարտին, Առաջնորդ Սրբազանը թափօրով եւ «Ուրախ լեր» շարականին երգեցողութեամբ առաջնորդուեցաւ

եկեղեցիէն դուրս, իսկ ներկայ հաւատացեալները հրաւիրուեցան համբուրելու նորօծ քահանային աջը եւ ստանալու անոր անդրանիկ օրհնութիւնները: Արարողութեան աւարտին, կնքհաօր աջակցութեամբ տեղի ունեցաւ նորընծայ քահանայ հօր լուացումի արարողութիւնը:

Աւելի ուշ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազանին ու կազմակերպութեամբ Քրեստենթա Զովիտի Զայց. Առաքելական եկեղեցւոյ հոգաբարձութեան, Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Զարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ պատշաճ հիւրընկալութիւն մը, ի պատիւ նորօծ քահանային: Զիւրընկալն էր Տոքթ. Ալպեր Գարամանուկեան:

Արտասանուեցան յաւուր պատշաճի ու շնորհաւորանքի խօսքեր: Կիրարկուեցաւ գեղարուեստական սեղմ յայտագիր մը: Ընդունելութենէն ետք, Տ. Ղեւոնդ Քահանայ անցաւ իր առանձնարանը, ուր պիտի բոլորէ քառասնօրեայ պահեցողութեան ու խոկումի շրջանը: Ան այնուհետեւ իբրեւ հոգեւոր հովիւ՝ ծառայութեան պիտի կոչուի Քրեստենթա Զովիտի Զայց. Առաքելական եկեղեցւոյ մէջ:

Ուրբաթ, 29 Յուլիսի երեկոյեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած էր բարեշնորհ Նազարէթ Սարկաւագի քահանայական կոչման արարողութիւնը, զոր կատարեց Առաջնորդ Սրբազանը: *(Ձեռնադրութեան մանրամասնութիւնները տեսնել Ազգ. Առաջնորդարանի կայքէջի լրատուութեան բաժինին մէջ):*

## ORDINATION OF A PRIEST WITHIN THE WESTERN PRELACY

- DEACON NAZARETH KIRAZIAN RENAMED REV. FR. GHEVONT

Sunday, July 31, 2011 will be remembered as a particularly joyous day within the Western Prelacy for on that day, the Feast of the Transfiguration of our Lord Jesus Christ was celebrated in all Churches and the Prelacy was blessed with a new priest.



H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy at St. Mary's Church in Glendale, during which he ordained Deacon Nazareth Kirazian into the priesthood, renaming him Rev. Fr. Ghevont. Deacon Nazareth Kirazian was previously the choir director at the Crescenta Valley Parish and will serve as the Parish

Pastor. His ordination Godfather was Dr. and Mrs. Hovhannes and Marina Der Zakarian.

Very Rev. Fr. Muron Aznikian and Rev. Fr. Ardak Demirjian assisted at the altar and in the ordination ceremony. Rev. Fathers Vazken Atmajian and Gomidas Torossian also participated in the Divine Liturgy.

Among the hundreds of faithful in attendance were Executive Council Chair Mrs. Rima Boghossian, and members Mr. Vahan Bezdikian, Mr. Garo Eshgjan, Mr. Kahren Beniasians, Delegates and Board of Trustees of St. Mary's Church and the Crescenta Valley Parish.

The ordination was conducted in accordance with the rites of the Armenian Apostolic Church established by our Church Fathers before the day's Gospel reading.

Following the ordination ceremony, the Prelate delivered his message.



At the conclusion of Divine Liturgy, with the singing of the "Oorakh Ler" hymn the Prelate was led out of the church in a procession, while the faithful came forward to greet the new priest and kiss his freshly-anointed hands. With his Godfather by his side, the washing of the new priest's hands took place, thus concluding the ceremony.

In the afternoon, a luncheon organized by the Crescenta Valley Parish Board of Trustees was held at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghzarian" Hall in honor of the newly ordained Fr. Ghevont. The luncheon was held under the auspices of the Prelate and hosted by Dr. Alber Karamanoukian.

Congratulatory remarks were delivered and a cultural program was also part of the festivities. After the reception, Fr. Ghevont retreated to begin his 40

days of solitude and reflection, after which he will begin his service as Pastor of the Crescenta Valley Parish.

On the evening of Friday, July 29<sup>th</sup>, the Prelate conducted the service of the calling into the priesthood at St. Mary's Church. (For the detailed press release and photos from the ordination, please visit the news section of the Prelacy website at [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org))

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

### **- ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԼԻՉՊՈՆԻ ՀԻՆԳ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ**

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Կիրակի, 7 Օգոստոսը Բարեկենդան Ս. Աստուածածնի Պահոց օրն է:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Էնսինոյի Ս. Նահատակաց Եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

Ս. Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Լիզպոնի Հինգ Նահատակներուն հոգւոց խաղաղութեան համար նախատեսուած հոգեհանգստեան արարողութեան: Յայտնենք, որ Չորեքշաբթի, 27 Յուլիսը, Լիզպոնի մէջ յանուն ազգի ու հայրենիքի, իրենց մատղաշ կեանքերը զոհած հինգ հերոսներու նահատակութեան 28-րդ տարելիցն էր:

## **PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT HOLY MARTYRS CHURCH**

Sunday, August 7 is the Eve of the Fast of the Assumption of the Holy Mother of God.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon at Holy Martyrs Church in Encino.

Following the Liturgy, the Prelate will preside over requiem service on the 28<sup>th</sup> anniversary of the Lisbon Five.

\*\*\*

## **ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՁԵՌՆԱՐԿԵ ՍՓԻՌՔԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅԺԻ ՑԱՆԿԱԳՐՈՒՄԻՆ**

*Ս. Աթոռոյս Դիւանէն լոյս տեսած հետեւեալ հաղորդագրութիւն-կոչը կը յանձնենք մեր հաւատացեալներուն ուշադրութեան.-*

Սիրելի՛ հայրենակից,

Մարդոյժը ազգի մը, ընկերութեան մը ներքին ուժականութեան, ստեղծագործ ոգիի ու փայլուն ապագայի տեսիլքն է: Հայ սփիւռքը հարուստ է իր մարդոյժով: Սակայն, սփիւռքի մարդոյժին ամբողջական պատկերը տակաւին չունինք: Ահա այս աշխատանքին է լծուած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովանաւորութիւնը ու քաջալերանքը վայելող այս ծրագիրին նպատակն է տեղեկութիւններ հաւաքել սփիւռքի մեր գաղութներէն ներս գործող ազգայիններուն (մտաւորականներ, ուսուցիչներ, փաստաբաններ, համալսարանի դասախօսներ, գիտական մասնագիտութեանց տեր անձեր, հասարակական գործիչներ, եւլն.) մասին: Այս ծրագիրը կը նկատենք խիստ կարեւոր եւ անյետաձգելի: Հետեւաբար, պիտի խնդրենք որ անյապաղ լեցնէք կցեալ հարցաթերթիկը եւ ուղարկէք մեզի: Գործնական պատճառներով այս հարցաթերթիկը պիտի ըլլայ անգլերէնով:

Պիտի թելադրենք, որ սոյն հարցաթերթիկը (<http://www.armeniancatholicosate.org>) նաեւ ուղարկէք ձեր բարեկամներուն, որպէսզի առաւելագոյն չափով տարածում գտնէ այս յոյժ կարեւոր ծրագիրը:

**ԴԻՄՆ  
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ**

## **CATHOLICOSATE OF CILICIA INITIATES A PROGRAM AIMED AT GATHERING INFORMATION ABOUT MANPOWER IN THE DIASPORA**

We bring to your attention the following communiqué we have received from the Catholicosate of Cilicia. We call on our faithful to assist in this endeavor and inform your relatives and friends to participate as well:

Dear fellow Armenians,

Manpower is the indicator of a nation's or community's inner power and creative mind and a guarantor of its bright future. The Armenian Diaspora is rich with manpower. It is vitally important that we get a clear, accurate and comprehensive information about our manpower in the Diaspora. Indeed, "Information is power; and the power of knowledge and information becomes a source of deeper self-understanding and self-affirmation" according to His Holiness Aram I, Catholicos of Cilicia.

The Armenian Catholicosate of Cilicia has initiated a program aimed at gathering information about our manpower in the Diaspora. By manpower we basically mean: community leaders, clergy, economists, people of media, writers, politicians, artists, public figures, medical doctors, teachers, university lecturers, businessmen, and generally specialists in the area of science and technology, etc. This initiative has the full support of His Holiness.

Thus, we kindly ask you to fill in the Form (<http://www.armeniancatholicosate.org>) and submit it to the Catholicosate, Antelias, Lebanon. We also ask you to forward this e-mail (with the link <http://www.armeniancatholicosate.org>) to your friends.

**CHANCELLERY  
CATHOLICOSATE OF CILICIA**

\*\*\*

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԿԸ ՇՆՈՐՀԱԴՈՐԷ Տ. ՆԱՐԵԿ ԱՐՔ.  
ԱԼԵՄԵԶԻԱՆԸ՝ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՏԵՍՈՒՉ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԱՌԻԹՈՎ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տեղեկատուական աղբիւրներէն իմացած ենք, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի տնօրինումով, Դպրեվանքի Տեսուչ նշանակուած է Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքեմեզեանը, որ ցարդ կը վարեր Միջ-եկեղեցական բաժանմունքը:

Այս առթիւ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան շնորհաւորանքի նամակ մը յղեց Նարեկ Սրբազանին, անոր մաղթելով յաջողութիւն իր ստանձնած նոր առաքելութեան մէջ:

Յայտնենք, որ մամլոյ հաղորդագրութեամբ մը, Դպրեվանքի Տեսչութիւնը կը յայտնէ թէ Դպրեվանքը իր 82-րդ կրթական տարեշրջանին համար սկսած է նոր սաներու արձանագրութեան:

2011-2012 տարեշրջանին արձանագրութիւնը կը սկսի 20 Օգոստոսին եւ կ'աւարտի 30 Սեպտեմբերին: Կրթական տերեշրջանը պիտի սկսի Երկուշաբթի, 10 Հոկտեմբերին:

Դպրեվանք կ'ընդունուին նախակրթարանի 6-րդ դասարանը աւարտած աշակերտներ, նաեւ՝ աւելի բարձր դասարաններէն մասնաւոր դիմում կատարող թեկնածուներ:

Հարաւային Զալիֆորնիոյ մէջ բնակողներ, յաւելեալ տեղեկութիւններու համար կրնան կապ հաստատել Ազգային Առաջնորդարանին հետ:

**ARCHBISHOP NAREG ALEMEZIAN APPOINTED  
DEAN OF THE CATHOLICOSATE SEMINARY**

The Catholicosate of the Great House of Cilicia has reported that H.H. Catholicos Aram I has appointed H.E. Archbishop Nareg Alemezian Dean of the Seminary. Archbishop Nareg was formerly the Ecumenical Officer of the Catholicosate.

The Prelate sent a letter to Archbishop Nareg congratulating him on this appointment and wishing him success in his new position.

The Catholicosate also reports that the Seminary will soon be accepting new students for its 82<sup>nd</sup> school year. Enrollment begins on August 20 and ends on September 30. The school year begins on Monday, October 10.

The Seminary accepts students after they complete sixth grade, however students in higher grades are considered as well.

Interested students in the Southern California region can contact the Prelacy for more information.

\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ԷՍԿԻՃԵԱՆ» ԹԱՆԳԱՐԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ



Ուրբաթ, 5 Օգոստոսի կեսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը «Արարատ» Տան «Էսկիճեան» թանգարանի տնօրէն Տիար Մարթին Էսկիճեանի ու վարիչ Տիկին Մակի Մանկասարեանի:

Նկատի ունենալով, որ Տիար Մարթին Էսկիճեանի առաջին այցելութիւնն էր,

հանդիպումը առիթ եղաւ Ազգ. Առաջնորդարանի կառոյցին ու աշխատանքի դաշտերու ծանօթացման: Խորհրդակցութեան նիւթ եղաւ նաեւ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովուապետական մօտալուտ այցելութիւնը: Յարգելի հիւրերը փափաք յայտնեցին, որ եթէ Վեհափառի այցելութեանց ժամանակացոյցին մէջ յարմարութիւն ստեղծուի, ան այցելութիւն մը տայ նաեւ «Էսկիճեան» թանգարան:

Առաջնորդ Սրբազանը գնահատանքով անդրադարձաւ «Արարատ» Տան ու «Էսկիճեան» թանգարանի գործունեութեան մասին, նշելով, որ այս հաստատութիւնները հոգեհարազատ են Ազգ. Առաջնորդարանին:

## PRELATE WELCOMES THE DIRECTORS OF THE ARARAT-ESKIJIAN MUSEUM

On Friday, August 5, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed Chairman of the Ararat-Eskijian Museum Mr. Martin Eskijian and Vice-Chair Mrs. Maggie Mangassarian Goschin.

Given that it was Mr. Eskijian's first visit to the Prelacy, he was first familiarized with the departments and endeavors of the Prelacy. During discussions on the upcoming Pontifical Visit of H.H. Catholicos Aram I, the guests expressed an interest in having His Holiness visit the Eskijian Museum if his schedule permits.

The Prelate commended the directors for their commitment to carrying out the mission of the Eskijian Museum and for their part in preserving our culture through their work at the Museum.

\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Զ.Մ.Ը.Մ.Ի «ԱՐԱՐԱՏ» ՄԱՍՆԱԾԻՂԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ



Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Երեքշաբթի, 2 Օգոստոսի երեկոյեան, Ազգ.

Առաջնորդարանի «Սիւլահեան» դահլիճին մէջ ընդունեց այցելութիւնը Զ.Մ.Ը.Մ.Ի «Արարատ» մասնաճիւղի վարչութեան, գլխաւորութեամբ ատենապետուհիին՝ Տիկին Զելիկ Իսաղուլեանի:

Յարգելի հիւրերը յայտնեցին Առաջնորդ Սրբազանին, թէ մասնաճիւղը այս տարի կը նշէ իր հիմնադրութեան 33րդ տարեդարձը, զոր մեծ շուքով պիտի տօնախմբէ 22 Զոկտեմբերին: Այս առիթով, նախատեսուած են շարք մը ձեռնարկներ, որոնց շարքին՝ երիտասարդներու համար դաստիարակչական դասախօսութիւններ ու հաւաքներ:

Տեղեկութիւններ փոխանցուեցան մասնաճիւղի ընթացիկ աշխատանքներուն, ապա նաեւ Զայաստանի հետ կապերուն մասին: Մասնաճիւղը, իբրեւ ներկայացուցիչը Կլէնտէյլի, մասնակցութիւն պիտի բերէ Զայաստանի մէջ կազմակերպուած Զամահայկական խաղերուն: Զայաստան մեկնող պատուիրակութիւնը բաղկացած է 83 անդամներէ: Այս խաղերէն անկախ, «Արարատ»ը կապեր հաստատած է Զայաստանի կարգ մը դպրոցներուն հետ ու կը հոգայ անոնց մարզական կարիքները, կատարելով հայրենասուեր գործ:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց հիւր Զ.Մ.Ը.Մ.ականները եւ բարձր գնահատեց «Արարատ» մասնաճիւղի սերնդակերտ ու հայրենասուեր աշխատանքը: Ան այս առիթով անդրադարձաւ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Զովուպետական այցելութեան, որ տեղի պիտի ունենայ Զոկտեմբեր 6էն 23: Առաջնորդ Սրբազանը նշեց, որ Վեհափառի այցելութեան նախապատրաստական աշխատանքները



ընթացքի մէջ են, ճշդուած են կարգ մը ձեռնարկներու եւ հանդիպումներու թուականները, ինչպէս՝ դիմաւորումն ու աջահամբոյրը՝ 6 Հոկտեմբերի երեկոյեան, Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ, Հայրապետական Ս. Պատարագն ու պաշտօնական ճաշկերոյթը, 16 Հոկտեմբերին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ եւ «Եունիվըրսըլ Հիլթըն»ի մէջ՝ յաջորդաբար, նաեւ այցելութիւններ ծխական կարգ մը շրջաններու: «Արարատ»ի ներկայացուցիչները յոյս յայտնեցին, որ Վեհափառ Հայրապետը առիթ ունենայ հանդիպում ունենալու Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին հետ:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը յուշանուէրներ յանձնեց հիր վարչականներուն:

## **PRELATE WELCOMES HOMENETMEN "ARARAT" CHAPTER BOARD MEMBERS**



On Tuesday, August 2, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy board members of the Homenetmen "Ararat" Chapter, headed by Chairlady Mrs. Helig Isagholian.

During the meeting, which took place at the "Sulahian" Reception Hall, the guests reported that this

year is their Chapter's 33<sup>rd</sup> anniversary, which will be celebrated on October 22<sup>nd</sup>, and that a number of other events are also being planned such as lectures and gathering geared towards youth.

Reports were also given on the general activities of the Chapter and their relation with Armenia. The guests informed the Prelate that a group of 83 members will soon participate in the Pan-Armenian Games in Armenia, and that the Chapter has also established ties with a number of schools in Armenia and assists in their athletic needs.

The Prelate commended the dedication and service of the members to our community. He reminded the guests that H.H. Catholicos Aram I will be honoring the Western Prelacy with a Pontifical Visit from October 6 to 23 and that the planning is already underway. He noted that the community-wide welcoming will take place on October 6 at St. Garabed Church in Hollywood, the Pontifical Banquet on October 16 at the Universal Hilton, and that the full itinerary will be completed in due time. The guests expressed their wish that His Holiness will have an opportunity to meet with the greater Homenetmen family during his visit.

The visit concluded with the Prelate presenting the guests with mementos.

\*\*\*